# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 248 (24529), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۲۹) ۲۴۸ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ՇԱԲԱԹ

2 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023

شنبه – ۱۱ آذر ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی


# ՀՈՐՄՈԶԻ ՆԵՂՈՒՑՈՒՄ ԻՐԱՆԻ ԵՒ ՕՄԱՆԻ ՌԾՈՒ-Ի ՀԱՄԱՏԵՂ ԶՕՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԱՆՑԿԱՑԻԵԼ




«ԱԼԻՔ» - Ծովային փրկարարական զօրավարժութիւններ են անցկացուել Հնդկական ովկիանոսի հիւսիսում եւ Հորմոզի նեղուցում՝ Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ Օմանի Թագաւորութեան ռազմածովային ուժերի մարտական նաւերի եւ թռիչքային ստորաբաժանումների մասնակցութեամբ:

Մէկօրեայ այս զօրավարժութիւնների ընթացքում երկու երկրների ռազմական ուղղաթիռները, Իրանի ԱԹՍ-ների եւ ռազմաօդային ուժերի հետախուզական ինքնաթիռների հետ համատեղ, Հնդկական ովկիանոսի հիւսիսում եւ Հորմոզի նեղուցում իրականացրել են ռազմական եւ առեւտրային նաւերի ծովարկման դիտորդական եւ մոնիտորինգի աշխատանքեր եւ աջակցել են ծովային մարտական ստորաբաժանումներին:

Երկու երկրների մարտական ստորաբաժանումների միջեւ համակարգուած եւ արդիւնաւէտ գործողութիւնները վկայում են Իրանի եւ Օմանի կարեւոր դերի եւ կարողականութեան մասին՝ Հորմոզի նեղուցի, Պարսից ծոցի եւ Օմանի ծովի համաշխարհային էներգետիկ երթուղու անվտանգութեան ապահովման գործում՝ առանց արտատարածաշրջանային ուժերի ներկայութեամբ:

Արա Շահվերդեան.

## «Իրանը ռազմավարական եւ յատուկ նշանակութեամբ դիրք ունի տարածաշրջանում»



«ԱԼԻՔ» - Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր եւ խորհրդարանի Շինարարական յանձնաժողովի անդամ Արա Շահվերդեանը ընդգծել է. «Ծովակենտրոն տնտեսութեամբ հնարաւոր է ապահովել երկրի տնտեսութեան զգալի բաժինը»:

Երիտասարդ լրագրողների ակումբի հետ հարցազրոյցի ընթացքում, Արա Շահվերդեանն անդրադառնալով ծովակենտրոն տնտեսութեանը, ասել է. «Մեր երկիրը հիւսիսից ու հարաւից ճանապարհ ունի դէպի ծով եւ ծովի տնտեսութիւնը մի բարիք է եւ մենք պէտք է ներդրում կատարենք այս ոլորտում»: Նա ընդգծել է. «Միւաւասիկ տնտեսական լաւ աճ ունեցող երկրների 80%-ը գտնւում են ծովերի ափին եւ լաւապէս օգտւում այս հնարաւորութիւնից»:

Պատգամաւորը ընդգծել է. «Որպէսզի կարողանանք օգտուել ծովից, պէտք է փոքր բիզնեսների հիմքը դնենք, եւ խորհրդարանը եւս անհրաժեշտ արտօնութիւնները տուել է, եւ նաւահանգիստների ու նաւագնացութեան կազմակերպութիւնը նոյն այդ օրէնքների շրջագծում կարող է հիմքը դնել փոքր բիզնեսների»: Նա նշել է. «Ենթակառուցւածքը այն չէ, որ պարզապէս նաւահանգիստ կառուցենք եւ ասենք, որ մենք նաւամատոյց ունենք: Մենք պէտք է օգտագործենք նաւահանգիստները, եւ նաւահանգիստները պէտք է միացւած լինեն երկաթգծերին ու ճանապարհներին,

(Շար. 8-րդ էջում)

## Նշւեց Հ. Մ. «Սարդարապատ» միութեան հիմնադրման 40-ամեակը

(Տես 8-րդ էջում)



## Իրանական ԱԹՍ-ները վերահսկում են արտատարածաշրջանային նաւատորմի տեղաշարժը



«ԱԼԻՔ» - Իրանական ԱԹՍ-ները վերահսկում են արտատարածաշրջանային նաւատորմի տեղաշարժն ու գործողութիւնները Պարսից ծոցում, Հորմոզի նեղուցում եւ Օմանի ծովում: Այս մասին տեղեկացրել է Իրանի ռազմածովային ուժերի հրամանատար դեր-ծովակալ Շահրամ Իրանին:

«Հակառակորդների ՌՏԿ-ների տեսադաշտի համար մեր հետախուզական աննկատ ԱԹՍ-ները թռչում են արտատարածաշրջանային նաւատորմի վրայով այնպէս, որ մենք տեսնում ենք նրանց, իսկ նրանք՝ ոչ:

Նրանք հետախուզւում են ամէն վայրկեան, եւ պէտք է զգոյշ լինեն, քանի որ, եթէ սխալ թոյլ տան, ապա գործ են ունենալու մեր երկնային անտեսանելի թռչողների հետ»,- ասել է ծովակալ Իրանին:

Նա նաեւ տեղեկացրել է, որ մօտ ապագայում անց է կացւելու Իրանի, Ռուսաստանի եւ Չինաստանի ռազմածովային ուժերի համատեղ զօրավարժութիւնները, որոնց որպէս դիտորդ հրաւիրւել են Պակիստանի, Օմանի, Բրազիլիայի, Հնդկաստանի, Հարաւային Աֆրիկայի եւ Կասպից ծովի աւազանի մի շարք երկրներ:

## Նասեր Քանանին Եւրոպական երեք երկրներին խորհուրդ է տւել՝ խուսափել այնպիսի յայտարարութիւններից, որոնք չեն նպաստում Իրան-Եւրոպա փոխգործակցութեանը



«ԱԼԻՔ» - Իրանի արտաքին գործերի նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Նասեր Քանանին ապակողմնորոշիչ եւ հեռու իրաւական հիմունքներից եւ քաղաքական յատուկ նպատակներ հետապնդող է համարել Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Անգլիայի արտգործնախարարութիւնների յայտարարութեան դրոյթները՝ կապւած «Ֆաթթահ 2» հրթիռի հետ:

Իրանի արտաքին գործերի նախարարութեան լրատւական կայքէջի համաձայն՝ Նասեր Քանանին ընդգծելով, որ իրանական 1402 թւականի մեհր ամսի 26-ից Անվտանգութեան խորհրդի մակարդակով դադարեցւել է Իրանի Իսլամական Հանրապետութեան նկատմամբ հրթիռային բոլոր սահմանափակումները, անընդունելի է համարել եւրոպական երեք երկրների յայտարարութեան մէջ ընդգծւած դրոյթները: Քանանին յայտարարել է, որ Իրանի Իսլամական Հանրապետութեան հրթիռային նորմատիւ կարողութիւնների զարգացման նպատակը կանխարգելումն է՝ ըստ երկրի պաշտպանական կարիքների: Նա նշել է. «Որոշ կողմերի անհիմն մեղադրանքները որեւէ ազդեցութիւն չունեն պաշտպանական ոլորտում Իրանի Իսլամական Հանրապետութեան իրաւունքների եւ օրինական գործողութիւնների վրայ: Քանանին Եւրոպական երեք երկրներին խորհուրդ է տւել, խուսափել այնպիսի յայտարարութիւններից, որոնք չեն նպաստում Իրան-Եւրոպա փոխգործակցութեանը:



«Հողը մեր ոտքի տակ է ոչ թէ տրորելու համար, այլ որպէս յենարան, որ պինդ կանգնենք եւ մեր յենարանը զգանք մեր գլխից բարձր: Տրւած է ոչ թէ տրաքւելու չափ կշտանալու եւ փառք վաստակելու համար, այլ՝ ի պահ չծնւածների: Հողի այսօրւայ տւած հացը մերն է, իսկ հողը՝ չծնւածներինը»

*Մուշեղ Գալշոյեան (1833-1980), հայ ճանաչւած արձակագիր, լրագրող*


ARAM® coffee

ԱՐԱՄ

قهوه آرام սուրճ

فروشگاه مرکزی:

قائم مقام فراهانی–شماره ۶۴

88303478 եւ 88308730

www.aramcoffee.com

instagram:aram__coffee

Աբրահամ Գասպարեան.

# «Փաշինեանը չկայ, արեւմտամէտների այդ խուրձն ի՞նչ է անելու, չէ՞ որ Ռուսաստանն ահաւոր կացնային ձեւով է վերադառնալու»



Նոյեմբերի 30-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյեանը ելոյթ է ունեցել ԵԱՀԿ նախարարական 30-րդ համաժողովին: Իր ելոյթում Միրզոյեանը նախ անդրադարձել է Արցախում Ադրբեջանի գործած ոճրագործութեանը՝ շեշտելով, որ միջազգային հանրութեան լուռ համաձայնութեամբ է Ադրբեջանը հասել իր վաղեմի նպատակին՝ Լեռնային Ղարաբաղի տարածքը՝ առանց հայ բնակչութեան, ապա յաւելել է.

«Դա իրականացնելուց յետոյ էլ ադրբեջանական կողմի պահանջները չեն դադարել. հիմա Հայաստանի Հանրապետութեան ողջ ինքնիշխան տարածքն է դարձել մեր հարեւանի թիրախը»:

168TV-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում «Ջենեսիս Արմենիա» ուղեղային կենտրոնի եւ ABC media-ի ղեկավար Աբրահամ Գասպարեանը, խօսելով ԵԱՀԿ նախարարական համաժողովին Արարատ Միրզոյեանի ելոյթի շեշտադրումների մասին, նախ շեշտեց՝ ամբողջ ելոյթով Արարատ Միրզոյեանը շրջանցեց Արցախի հարցը եւ խօսեց ընդամէնը հետեւանքների մասին.

«Միւս կողմից, կարմիր թելով այս ելոյթում անցնում էին նախարարի ապահովագրութեանը միտուած տողերը, նախարարի ամբողջ ելոյթի նպատակը հետեւեալն էր՝ վաղն ինձ յանկարծ չմեղադրէք դաւաճանութեան համար: Արարատ Միրզոյեանն իր այդ ելոյթում փորձում էր ցոյց տալ, թէ՝ ժողովո՛ւրդ, ասացի մի բան, ինչը արգելւած է իմ իշխանութեան մէջ»,- ասաց Գասպարեանը՝ զուր համարելով Միրզոյեանի ասած ցանկացած խօսք, որը հնչեցւում է Արցախը յանձնելուց յետոյ Արցախի ինքնորոշման իրաւունքի, արցախցիների վերադարձի միջազգային բարձրագոյն երաշխիքների մասին չբարձրաձայնելու պարագայում:

Գասպարեանը քաղաքական կապիկութիւն համարեց այս իշխանութեան որդեգրած քաղաքականութիւնը՝ եթէ խօսեն Արցախի մասին, Ալիեւին տալու են առիթ Հայաստանի սահմանների վրայ յարձակւելու:

«Նոյն տրամաբանութեամբ՝ վաղն ասելու են՝ հիմա եթէ խօսենք Սիւնիքի մասին, եթէ միջանցք չտրամադրենք, վաղն Ադրբեջանը պատերազմ կը յայտարարի»,- ասաց Գասպարեանը՝ շեշտելով՝ Փաշինեանը չի խօսում Սիւնիքի մասին, դրա մասին խօսում է Արեւմուտքը, բրիտանացի պաշտօնեաները եւ ծրագրում Միջին Միջանցքի գործարկումը՝ Հայաստանի տարածքների հաշւին:

«Ամերիկացիներն ասում են՝ այդ միջանցքը պէտք է տրւի, ուզես թէ չուզես, ինչին դէմ է Ռուսաստանը, որն առաջարկում է ճանապարհ եւ ոչ՝ միջանցք: Հայաստանը մաս է դառնում այդ միջանցքին՝ առանց Հայաստանի կարծիքը հաշւի առնելու: Դու ոչ մի բան քեզնից չես ներկայացնում, քո փոխարէն արդէն բանակցում են»,- ասաց Գասպարեանը՝ շեշտելով՝ Փաշինեանին ընդամէնը մնում է փաթեթաւորել այս գործընթացը եւ կէբակրել այդ փաթեթաւորմամբ՝ ինչպէս Արեւմուտքին, այնպէս էլ՝ Հայաստանի ժողովրդին, որին տանում է պետականազրկման՝ յանուն սեփական աթոռի պահպանման:

ABC media-ի ղեկավարի մեկնաբանութեամբ՝ Փաշինեանի իշխանութիւնը, իրագործելով իրեն թելադրւած ծրագիրը, Ալիեւի հետ պայմանաւորւածութեան արդիւնքում զգում է իր միակ դաշնակցին՝ առանց հասկանալու, որ Արեւմուտքը Հայաստանի համար չի ստեղծելու այն պայմանները, որոնք ստեղծւած են, օրինակ, ԵԱՏՄ-ում:

«Այ խելօք, Հայաստանը 80 տոկոսով կապւած ԵԱՏՄ-ի եւ Ռուսաստանի հետ՝ իր ենթակառուցւածքներով, ատոմակայանով, եթէ դու ֆրանսիական ռադարներ ես բերում, որից, ի դէպ, Հայաստանն արտադրրում էր առաջին պատերազմի ժամանակ, ի՞նչ ես անելու դրանցով Հայաստանի տնտեսութեան հետ: Արեւմուտքը խնդիր է դրել, որ Փաշինեանն իր կապիկութիւններով պաշտօնապէս հասնի նրան, որ Հայաստանն իր կապերը կտրի Ռուսաստանի հետ՝ դուրս գայ ՀԱՊԿ-ից, ԵԱՏՄ-ից, խզի հայ-ռուսական դաշնակցային պայմանագիրը: Ինչ վերաբերում է Փաշինեանի այդ քաղաքականութիւնը պաշտպանող Հայաստանի արեւմտամէտներին, ապա պէտք է հասկանալ, լաւ, Փաշինեանը չկայ, արեւմտամէտների այդ խուրձն ի՞նչ է անելու, չէ՞ որ Ռուսաստանն ահաւոր կացնային ձեւով է վերադառնալու այստեղ՝ իր դիրքերն ամրապնդելու համար»,- ասաց Աբրահամ Գասպարեանը:

**168.am**

Վարդան Ոսկանեան.

# «Ալիեւը Հայաստանի աշխարհաքաղաքական եւ նոյնիսկ աշխարհագրական մահն է»

Բաքւի բարբարոսական վարչախմբին իրականում պէտք չէ Հայաստանի հետ ո՛չ «խաղաղութեան պայմանագիր», ո՛չ էլ ինչ-որ սահմանազատում կամ սահմանագծում, քանզի վերջինիս միակ նպատակը Հայաստանի աշխարհաքաղաքական եւ նոյնիսկ աշխարհագրական մահն է: Այս մասին գրում է իրանագէտ Վարդան Ոսկանեանը:

«Այդ վարչախումբը եւ նրա կողմից այժմ կառավարւող արհեստածին Ադրբեջանը քաղցկեղային գոյացութիւն է, մահաբեր պալար, որը տարածւելու եւ ախտահարելու եւ, ի վերջոյ, սպանելու է մեր հայրենիքի եւ տարածաշրջանի ամբողջ օրգանիզմն այնքան ժամանակ, քանի դեռ դրա դէմ ազդու եւ համարժէք միջոցներ չձեռնարկւեն:

Ինչպէս ցանկացած նման չարագոյացութիւն, այն չի դադարելու ձգել տարածւել, ուստի ամենից առաջ ճշգրիտ ախտորոշումը շատ կարեւոր է, իսկ դրան պէտք է յաջորդի ոչ պակաս կարեւոր յստակ գործողութիւնների ծրագիրը եւ ճանապարհային քարտէզը, որի վերջնանպատակը պէտք



է լինի ոչ թէ այդ մահաբեր պալարի գոյութեան հետ իբր հաշտուելը, ինչն անհնար է, այլ այն արմատախիլ անելը»,- գրել է նա:

**Yerkir.am**

Արա Պօղոսեան.

# «Հայ եւ թուրք մարդկանց միջեւ մի անյաղթահարելի արեան գետ է գոյացել, որը երբեք թոյլ չի տայ այս երկուսին ապրել հաշտութեան մէջ»




Հայ եւ թուրք մարդկանց միջեւ մի անյաղթահարելի գետ է գոյացել, որը երբեք թոյլ չի տայ այս երկուսին ապրել հաշտութեան մէջ: Այդ գետը արեան գետն է, որ գոյացել է մինչ օրս: Այս մասին «Ֆէյսբուք»-ում գրել է քաղաքագէտ Արա Պօղոսեանը:

«Այդ գետով ոչ միայն հայ մարդու արիւնն է հոսում, այլեւ հազարաւոր անթաղ դիակներ, որ մինչ օրս հոգու հանգստութիւն են ուզում:

Մինչեւ այդ գետը արեան փոխարէն ջրով չհոսի, հայ եւ թուրք թշնամութիւնը մի օր պիտի կործանի մեզանից մէկին՝ կամ հայ, կամ թուրք: Իհարկէ կայ երրորդ ճանապարհը՝ ինչպէս նշեցի, եթէ արեան փոխարէն այդ գետը ջրով հոսի, իսկ դա հնարաւոր է միայն այն դէպքում, երբ թուրքը կընդունի իր ոճրագործութիւնը, անկեղծօրէն կը զղջայ եւ իր համար ծանր գնով՝ կը գնայ փոխհատուցման:

Սրանից յետոյ հնարաւոր կը լինի խաղաղ գոյակցութեան մասին խօսել, իսկ մինչ այդ՝ խաղաղութեան թէզերը միայն դէպի ոչնչացում տանող ճանապարհներ են:

Բայց դու պիտի ապրե՛ս, երկի՛ր Նայիրի»:

**Yerkir.am**

***Թէոդիւանագիտութեան հարթակ.***

Իրանում «Պաղեստինի իսլամական ջիհադ»-ի ներկայացուցիչ Նասեր Աբու Շարիֆ.

# «Իրանի ներսում «Մուսադ»-ի գործակալների անւանացանկն «Ալ-Աքսայի փոթորկ»-ի արդիւնքում Դիմադրութեան ձեռքն է ընկել»



«ԱԼԻՔ» - «Ալ-Աքսայի փոթորկ»-ի ձեռքբերումները մեր պատկերացումներից վեր են: 50 իսրայէլական բազաներ են կոտրւել եւ ժամանակաւոր անցել դիմադրութեան ձեռքը, իսկ այս գործողութեան ընթացքում դիմադրութեանը յաջողւել է իսրայէլական հետախուզական սերւերներ մուտք գործել, որտեղ պահւած են եղել գործակալական ցանցերի անւանացանկեր, այդ թւում՝ Իրանում:

Իր քաղաքական վերլուծութիւններով մեդիադաշտին յայտնի՝ «Շաբնամէ» ալիքի հաղորդավար՝ «Աղայէ թահլիլգար»-ի հրապարակումներից՝ 1404-ը կենտրոնացած էր Պաղեստինեան զարգացումների վրայ: Աղբիւրի համաձայն՝ դիմադրրութեան ուժերից ՀԱՄԱՍ-ի մասնակցութեամբ բանակցային գործընթացը հաստատումն էր այն բանի, որ սիոնիստական ռեժիմը վերջապէս հաշւի նստելով ՀԱՄԱՍ-ի հետ այն դէ-ֆակտօ ճանաչել է որպէս պաշտօնական ուժ եւ հաստատել նրա իշխանութիւնը Գազայի հատւածի վրայ:

Այս նախաբանից յետոյ վերլուծաբանը հրապարակել է մի տեղեկատուութիւն, որի մասին առայժմ պաշտօնական հարթակներում լռութիւն է տիրում: Աղբիւրի համաձայն՝ ՀԱՄԱՍ-ի բանակցային գործընթացների մասին հրապարակումների հետ մէկ տեղ, տարածւել է նաեւ մի կարեւոր տեղեկատուութիւն, որի համաձայն Գազայի դիմադրութիւնը սիոնիստական ռեժիմի լրտեսների հետախուզական սերւերներ ու կայքեր է ներթափանցել ձեռք բերելով յոյժ գաղտնի տեղեկութիւններ: «Այնտեղ կան նաեւ Իրանում հաւաքագրւած կամ արդէն հաստատւած սիոնիստական ռեժիմի գործակալների ու լրտեսների անունները»,- նշւած է հրապարակման մէջ:

Հեռուստամեկնաբանի խօսքով՝ Իրանի առաջնորդը վերջերս նշել էր, որ «Ալ-Աքսայի փոթորիկ»-ը ոչնչացրեց բոլոր այն ծրագրերը, որոնք նրանք կազմել էին տարածաշրջանի համար: Խօսքն այն բոլոր հակամարտութիւնների ու չակերտաւոր յեղափոխութիւնների մասին է, որոնք կառավարւել կամ աջակցւել են սիոնիստների գործակալական ցանցերի կողմից: Սկսած Սիրիայի ներքին պատերազմից, վերջացրած Կովկասեան զարգացումներով:

Մէկ այլ հրապարակման համաձայն, որը տեղ է գտել «Կովկասի ձայն» ալիքում, երբ Իրանում «Պաղեստինի իսլամական ջիհադ» շարժման ներկայացուցիչ Նասեր Աբու Շարիֆը յայտարարութիւն տարածեց այն այն, որ Դիմադրութեան ուժերի իրականացրած «Ալ-Աքսայի փոթորիկ»-ի գործողութեան արդիւնքում բացայայտւել է նաեւ Իրանում «Մուսադ»-ի լրտեսների ցուցակը, նոյն օրը Բասիջի հրամանատարութիւնը մեծարման միջոցառում էր կազմակերպել գնահատելու Դիմադրութեան շարժման մէկ այլ ճակատի՝ Բաքւի Հանրապետութիւնում գործող «Հուսէյնիւն»-ի նւիրական ծառայութիւնների առիթով:

«Առաջին կարգի լրտեսները, թէկուզ փոքր ինչ խելք ունենալու դէպքում, կարող են այս երկու լուրերի միջեւ եղած կապը նկատել եւ հետեւութիւն անելով մտահոգւել իրենց ճակատագրով: Իմացողը կիմանայ ասածում եղած նրբութիւնը»,- գրել է նոյն կայքի մեկնաբան՝ դոկտ. Մոհամմադ Մոթլաղը:

Իսկ երբ, ինչպէս միշտ իր մեղմացուցիչ հանգամանքներում հանդէս գալով ԱԳՆ-ը յայտարարութիւն տարածեց, որ իբր Ադրբեջանի Հանրապետութեան հետ մեր յարաբերութիւնները լաւ ուղու վրայ են, ընդամէնը մէկ օր անց Բաքւի պաշտօնական աղբիւրներից սնւող «Ախպար» կայքը գրում է. «Շատ շուտով մեր դրօշը կը ծածանի Թաւրիզում»:

Այս կայքը այնուհետեւ գրել է. ««Հ-ա-ր-ա-ւ-ա-յ-ի-ն Ա-դ-ր-բ-ե-ջ-ա-ն»-ի քաղաքացիական շարժման մի խումբ ակտիւիստներ թռուցիկներ են բաժանել Թաւրիզ քաղաքով մէկ եւ գրել, որ քաղաքում շուտով ծածանելու են իրենց դրօշը»: Այս մասին տեղեկացնելով «Ազարիհա» տելեգրամային ալիքը նշել է, որ ահա թէ որտեղից կարելի է սկսել այդ սիոնիստական գործակալական ցանցի անհատների որոնումը:

Առաւել ուշագրաւ հրապարակում կայ պատերազմական փորձագէտ-լրագրող Ջաֆարիի X հարթակի միկրոբլոգում, որտեղ օգտատէրը նշել է, որ Գազայում 52 օր շարունակւող պատերազմից ու աւերածութիւններից յետոյ, սիոնիստական ռեժիմի «հզօր» բանակը ոչ միայն չկարողացաւ գտնել ու ազատել պատանդներից եւ ոչ մէկին, այլեւ՝ նրան չյաջողւեց գերել դիմադրրութեան մարտիկներից ոչ մէկին:

«...եթէ չլինէր Ամերիկան, նոյն պաղեստինցիներն արդէն հաշիւը մաքրած կը լինէին սիոնիստների հետ, իսկ հիմա, երբ ամերիկեան կողմն ասում է՝ դէմ է պատերազմի շարունակմանը եւ այլեւս չի կարող օգնել, ապա պարզ չէ, թէ Նեթանիահուն ումից զինամթերք մուրալով է ուզում շարունակել պատերազմը...»,- գրել է փորձագէտը եւ յաւելել, որ Էնթոնի Բլինքէնի Իսրայէլ կատարած անժամանակ այցից կարելի է կռահել, որ նա մէկ առաջադրանքով է մենկել տարածաշրջան՝ դա գործնականում գորգը Նեթանիահուի ոտքերի տակից քաշելն է:



Կարէն Խանլարեան.

# «Իրանն աւելի շատ մտահոգւած է Ադրբեջանում Թուրքիայի ներկայութեամբ, քան Հայաստանում՝ ԵՄ առաքելութեամբ»

Իրանը, խօսելով արտատարածաշրջանային ուժերի առկայութեան մասին, աւելի շատ մտահոգւած է ՆԱՏՕ-ական Թուրքիայի ներկայութեամբ Ադրբեջանում եւ Արցախի օկուպացւած տարածքներում, քան Հայաստանում՝ ԵՄ դիտորդների ներկայութեամբ: Այս մասին նոյեմբերի 28-ին News.am-ի թղթակցի հետ զրոյցում ասել է Իրանի խորհրդարանի նախկին պատգամաւոր, պատմաբան Կարէն Խանլարեանը:

Նրա խօսքով՝ Թեհրանի այս մօտեցումը վերաբերում է Թուրքիային ոչ թէ որպէս առանձին երկրի, այլ որպէս ՆԱՏՕ-ի անդամի:

Նա կարծում է, որ, այսպէս կոչւած, «Զանգեզուրի միջանցք»-ի բացումը կը նշանակի ոչ միայն ՆԱՏՕ-ի, այլեւ Իսրայէլի ներկայութիւն ողջ Հարաւկովկասեան տարածաշրջանում:

«Կարծում եմ՝ Իրանի հիմնական մտահոգութիւնը սրա հետ է կապւած, այլ ոչ թէ ԵՄ առաքելութեան: Բացի այդ, եթէ Թուրքիան ազատ ելք ունենայ դէպի Ադրբեջան, կարող է վերահըսկողութեան տակ վերցնել Կասպից ծովը: Դա կը նշանակի, որ Կենտրոնական Ասիան մինչեւ Պակիստան կը գտնուի ՆԱՏՕ-ի ռազմական վերահըսկողութեան տակ»,- յաւելեց Խանլարեանը:

Նա ենթադրում է, որ այս պահին Սիւնիքի նկատմամբ Թուրքիայի եւ Ադրբեջանի յաւակնութիւնների դէմ հիմնական զսպիչն Իրանի սկզբունքային դիրքորոշումն է:

«Եթէ Իրանը միջամտի Մերձաւոր Արեւելքի գործընթացներին, եւ ուշադրութիւնը Հարաւային Կովկասի նկատմամբ թուլանայ, ապա Ադրբեջանի եւ Թուրքիայի կողմից Սիւնիքի դէմ ռազմական ագրեսիայի յաւանականութիւնը կը մեծանայ: Սակայն նման սցենարը քիչ յաւանական է»,- ընդգծեց պատմաբանը:

Նրա գնահատմամբ՝ Թեհրանը կարող է նոյնիսկ առանց ռազմական միջամտութեան այլ երկրներին հետ պահել անցանկալի գործողութիւններից, ինչպէս դա տեղի է ունենում Մերձաւոր Արեւելքում:

«Իրանը հզօր քաղաքական եւ դիւանագիտական լծակներ ունի Ադրբեջանի վրայ: Այս լծակները սկսել են տեսանելի լինել 2016 թւականի քառօրեայ պատերազմի ժամանակ: Եւ այսօր այդ լծակներն էլ աւելի են ուժեղացել»,- պարզաբանեց Խանլարեանը:

Ինչ վերաբերում է «3+3» ձեւաչափին, ապա Իրանն այն դիտարկում է ոչ թէ որպէս հակամարտութիւնների կարգաւորման հարթակ, այլ որպէս յետկոնֆլիկտային իրավիճակի քննարկման հարթակ:

«Այս առումով ձեւաչափը կարող է օգտակար լինել ողջ տարածաշրջանի համար: Բայց եթէ Ադրբեջանը փորձում է օգտագործել «3+3»-ը կոնֆլիկտային հարցերը լուծելու համար, ապա Հայաստանը պէտք է ուշադրութիւն դարձնի դրան»,- ասաց պատմաբանը:

Եթէ Երեւանը ձգտում է դիւերսիֆիկացնել իր յարաբերութիւնները, ապա Իրանն այս առումով կարող է լաւ գործընկեր դառնալ ոչ միայն անվտանգութեան, այլեւ այլ ոլորտներում, վստահ է նա:

«Ես կարծում եմ, որ դիւերսիֆիկացիան չպէտք է շփոթել արտաքին քաղաքական վեկտորի փոփոխութեան հետ»,- եզրափակեց նախկին պատգամաւորը:



Արտակ Զաքարեան.

# «Ո՞վ է պատրաստ ներդրումներ ու կապիտալ ծախսեր անել մի երկրում, որի կառավարութիւնը չի կարողանում երաշխաւորել իր քաղաքացիների ու Արցախի հայրենակիցների մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութիւնը»

Արտակ Զաքարեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրում է.

«Որքան էլ, որ հայրենի Արցախը յանձնած եւ հազարաւոր երիտասարդների զոհւելու պատճառ դարձած կառավարիչները խօսեն Հայաստանի ցուցանիշերի բարելաւման մասին, դրանից իրականութիւնը չի փոխւելու:

Աջ ու ձախ խօսում են «ազատ շուկայի» մասին, տնտեսական մենաշնորհների՝ իբրեւ թէ վերացման մասին, բայց դրանից, միեւնոյն է, արտաքին ներդրումները չեն գալիս Հայաստան:

Իսկ ո՞վ կը բերի ներդրում անի մի երկրում, որի ժողովուրդն իր ապագայի վերաբերեալ անորոշ պատկերացումներ ունի:

Ո՞վ է երաշխաւորելու ներդրումները, որտեղ նոյնիսկ պետութեան արտաքին անվտանգութեան հարցերը լուծւած չեն, եւ բարձրագոյն իշխանութիւններն ու քաղաքական համակարգը խօսում են հնարաւոր նոր պատերազմական ռիսկերի մասին:

Ո՞վ կը վստահի իր ներդրումները մի կառավարութեանը, որն արտաքին յարաբերութիւններում յայտնի է դարձել որպէս անվստահելի, տեղից-տեղ թռչող, դաշնակից ու գործընկեր երկրների հետ կայուն յարաբերութիւններ չունեցող:

Ո՞վ է պատրաստ երկարաժամկէտ ներդրումներ ու կապիտալ ծախսեր անել մի երկրում, որի կառավարութիւնը չի կարողանում երաշխաւորել իր քաղաքացիների ու Արցախի հայրենակիցների մասնաւոր սեփականութեան անձեռնմխելիութիւնը:

Ո՞վ է այն անխելք ներդրողը, որը կը հաւատայ մի կառավարութեանը, ով իր գործունէութեան ծրագրում գրւած հիմնական դրոյթներին հակառակ ու հակասող քաղաքականութիւն է իրականացնում:

Խոշոր բիզնեսը եւ յատկապէս արտաքին ներդրումները, ցանկացած պետութեան զգայուն ոլորտներից մէկն են: Չկայ անվտանգութիւն, կայունութիւն, սոցիալական արդարութիւն, քաղաքական կանխատեսելիութիւն, արտահանման եւ ներկրման երաշխաւորւած քաղաքականութիւն՝ չի լինելու նաեւ ներդրումային գրաւչութիւն: Թշնամանք ու հանրային պառակտում տարածող իշխանութիւնը ինչպէ՞ս կարող է գրաւչութիւն ապահովել արտաքին ներդրողների համար:

Հայկական «ժողովրդավարութեան» փուչիկն այլեւս գրաւիչ չէ: Այն փըչւել է միայն նրա համար, որպէսզի արտաքին խաղացողներն իրենց ռազմավարական ծրագրերն առաջ տանեն՝ սեփական շահերի համար, բացայայտ կերպով օգտագործելով ՀՀ կառավարիչներին:

Հայաստանում եւ Արցախում տեղի ունեցած բոլոր խոշոր ներդրումներն արւել են նախորդ իշխանութիւնների, մասնաւորապէս Ռոբերտ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի կառավարման տարիներին՝ յստակ երաշխիքների եւ վստահելի գործընկերային յարաբերութիւնների պարագայում:

Արտաքին բիզնեսի համար, այսօրւայ Հայաստանն օգտագործել եւ օգտագործւում է որպէս տրանզիտ, որից պետութիւնը որեւէ մնայուն արժէք չի շահում՝ բացի ֆինանսական շրջանառութիւնից ստացւած եկամուտներից: Դրանք էլ պարզ չէ, թէ ո՞ր ոլորտների զարգացմանն են ծառայել կամ ծառայում»:

168.am

# Ի՞նչ է Հայրենիքը



Ուրբաթ, 24 նոյեմբերին Նիկոլ Փաշինեան պատասխանեց քաղաքացիներու կողմէ իրեն ուղղուած հարցումներուն: Հարցում ուղղելու իրաւունք ստացել էին ոչ միայն Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները, այլեւ սփիւռքահայերը: Հարցումները յղուած էին նախապէս եւ պատշաճօրէն խըմբագրուած:

Համբերութեամբ հետեւեցայ մօտ ութ ժամ տեւած այս եզակի հարցազրոյցին: Հարցումներուն ոճը կը նմանէր հեքիաթներու մէջ պատմող հպատակ-թագաւոր զրոյցին՝ «Թագաւորը ապրած կենայ, ես խնդիրք մը ունիմ, մեռնեմ քո հոգիին»: «Թագաւորը» կը պատասխանէր բարեացակամ ոճով, երկար-բարակ բացատրելով կրկին ու կրկին ծանօթ իրողութիւններ: Առիթը օգտագործելով, Նիկոլ Փաշինեան երբեմն նիւթէն կը շեղէր ու իր տեսակէտները անգամ մը եւս ներկայացնելու առիթ կը ստեղծէր: Հարցազրոյցի աւարտին մօտ հասայ մինչեւ… Պապ թագաւոր (4-րդ դար):

Հետաքրքրական բազմաթիւ նիւթերու մէջէն կուզեմ առանձնացնել Հայաստանի ներկան ու ապագան բնորոշող հիմնական գաղափար մը, կարելի է ըսել՝ արդիական գաղափարախօսութիւն մը: «Խաղաղութեան խաչմերուկ» հանդիսանալու կոչուած Հայաստանը, ըստ Նիկոլ Փաշինեանի, 29800 քառ. կմ. տարածքով երկիր մըն է, որուն վրայ հիմնուած է պետութիւն մը: Այս պետութիւնը, մօտաւոր ապագային ճշտելի սահմաններով, հայոց հայրենիքն է: Նիկոլ Փաշինեան կը դաւանի, որ հայրենիք եւ պետութիւն անշփոթ կերպով միացած են իրարու, ինչպէս Հայ եկեղեցւոյ դաւանած Քրիստոսի աստուածային եւ մարդկային բնութիւններու անշփոթ միացումը:

Բոլոր անոնք, որոնք կը հաւատային, որ հայ ազգին հայրենիքը այն տարածքն է, ուր գոյացած է ցեղերու միախառնում, ուր կերտըւած է պատմական անցեալ, խօսուած է լեզու ու պաշտուած կրօն, ստեղծուած են սովորութիւններ, աւանդութիւններ, կենսակերպ, մշակոյթ, գիր ու գրականութիւն, երաժշտութիւն ու պարարուեստ, ճարտարապետութիւն ու քանդակագործութիւն եւ տակաւին այլ հարստութիւններ, խաբկանք եղած է: Դարերով հալածուած, ջարդուած, խժդժութեանց ենթարկուած, բայց միշտ իր ինքնութիւնը պահպանած ժողովուրդի հաւաքական ապրումներն ու իղձերը եղած են սուտ եւ անիրական:

Հայոց պատմական հայրենիքին մէկ փոքրիկ պատառին վրայ ծուարած ժամանակակից պետականութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը թանկագին աւանդ է, զոր պարտինք սիրել ու պաշտպանել: Սակայն ամբողջական Հայաստանը չէ, հայոց հայրենիքին մէկ մասն է միայն:

Գուրգուրալ հայկական ժամանակակից պետականութեան վրայ, պաշտպանել զայն, օժանդակել անոր բարգաւաճման, չենթադրեր ուրանալ ամբողջը: Ոչ ոք, ոչ իսկ Նիկոլ Փաշինեանը ընտրողներու բազմութիւնը իրաւունք տուած է իրեն որոշելու, որ Հայաստան հողային պահանջ չունի հարեւաններէն ու ապագային ալ՝ պիտի չունենայ: Հասկնալի է, որ այսօրուան պայմաններուն մէջ հողային պահանջներու արկածախնդրութեան կարելի չէ դիմել, սակայն ներկայիս ապրողներս իրաւունք չունինք ապագայ սերունդներու իրաւունքը ինչ որ խաղաղութեան պայմանագիրներով խափանելու: Ամէն ժամանակամիջոց կունենայ իր պայմանները, որոնք կրնան օր մը նպաստաւոր կացութիւններ ստեղծել ու սերունդի մը հնարաւորութիւն տալ սրբագրելու պատմական անարդարութիւնը:

Նոր անարդարութիւն մըն ալ ստեղծուեցաւ Արցախի պարպումով: Վերադարձի կարելիութեան մասին հարցումին Նիկոլ Փաշինեան պատասխանեց Արցախի գաղթական ժողովուրդը հրաւիրելով ստանալու Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն: Այսինքն՝ մոռնալու Արցախը: Արցախը Հայաստանի Հանրապետութեան մաս չի կազմեր (թէեւ ինք յայտարարած էր. «Արցախը Հայաստան է, ու վերջ»), ուրեմն հայրենիք չի համարուիր: Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի դառնալով հանրութեան մէջ մերուելով, արցախցիները հայրենադարձ կը դառնան ու փաշինեանական դաւանանքը գործադրուած կըլլայ:

Ես միշտ խուսափած եմ վիրաւորական արտայայտութիւններէ: Սակայն պետութիւնը ժամանակաւորապէս ներկայացնող իշխանութեան ղեկին կանգնողներուն հրաժարումը իրենց իսկ նախընտրական խոստումներէն, որ կերկարի մինչեւ հայրենիքի գաղափարին ուրացումին, կը ստիպէ զիս վկայելու, որ ականատես ենք ազգային դաւաճանութեան հրապարակային դրսեւորման:

Վերջ պէտք է տրուի այս գահավէժ անկումին:

ՏԻԳՐԱՆ ՃԻՆՊԱՇԵԱՆ

aztagdaily.com

# Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանի հանդիպումը՝ Կրթական խորհրդի հետ



Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի երկամեայ գործունէութեան շրջանի աւարտին, խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը, նոյեմբերի 26-ին մասնակցել է Կրթական խորհրդի հերթական նիստին:

Պրն. Արամեանը հանդիպման սկզբում, Թեմական խորհրդի անունից ողջոյնի եւ շնորհակալական խօսք է ուղղել երկամեայ գործունէութեան ընթացքում ցուցաբերուած սերտ համագործակցութեան համար, ապա հարցումներ ուղղել մի շարք յուզող հարցերի մասին:

Կրթական խորհրդի ատենապետ Ալֆրէդ Կարապետեանն էլ իր հերթին երախտագիտութեան խօսք է ուղղել եւ ամփոփ զեկոյց ներկայացրել իրագործուած աշխատանքների մասին: Նա անդրադառնալով Կրթական խորհրդի ծրագրած դպրոց առ դպրոց հանդիպումներին, որոնցից մի քանիսը դեռեւս ընթացքի մէջ են, յայտնել է, որ ծնողների հետ հանդիպման ընթացքում բոլոր հարցումներին լուսաբանիչ բացատրութիւններ են ներկայացուել եւ արձանագրւում են արծարծուող մտահոգութիւններն ու դժւարութիւնները, որոնց անդրադարձ կը լինի եւ կը քննարկուեն խնդիրների լուծման ու փարատման առումով:

Պրն. Արամեանը իր խօսքի ընթացքում անդրադարձել է նաեւ վերջին ժամանակաշրջանում ներկայացուած մի քանի դիմումներին, դպրոցների տարածքի հնարաւորութիւններից մշակութային տարբեր ոլորտների համար օգտագործելուն, որի ուղղութեամբ դժւարութիւնները մատնանշւելով քննարկում եւ խորհրդակցութիւններ են տեղի ունենում:

Հանդիպման աւարտին Նորայր Արամեանը մէկ անգամ եւս շնորհակալութիւն յայտնելով, յաջողութիւն է մաղթել խորհրդի ապագայ աշխատանքներին:

# Այցելութիւն Թեհրանի կուսակալութիւն



Նոյեմբերի 22-ին, Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը ընկերակցութեամբ ազգային առաջնորդարանի դիւանապետ Զօրիկ Կարապետեանի, այցելել է Թեհրանի կուսակալութիւն եւ հանդիպում ունեցել քաղաքական հարցերի տեղակալ դոկտ. Համեդ Շայեանի հետ:

Հանդիպմանը Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը անդրադառնալով գործող Թեմական խորհրդի երկամեայ գործունէութեան շրջանի աւարտին, շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն է յայտնել ընթացիկ շրջանում երկկողմ յարաբերութիւնների եւ ցուցաբերուած համագործակցութեան համար:

Դոկտ. Շայեանը, իր հերթին ողջունել ու շնորհակալութիւն է յայտնել այցի համար եւ ընդգծել փոխյարաբերութիւնների կարեւորութիւնը, յոյս յայտնելով, որ առաջիկայում կը շարունակի նոյն ընթացքը, որը ազդեցիկ է առհասարակ աշխատանքների սահուն ընթացքի եւ հասանական խնդիրների լուծման գործընթացի առումով:

**Ազգային առաջնորդարանի**
**Հանրային կապի գրասենեակ**

# Այցելութիւն ազգային առաջնորդարան



Նոյեմբերի 25-ին, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանը, ազգային առաջնորդարանի դահլիճում ընդունել է Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան նորընտիր վարչութեան անդամներին, ովքեր այցելել են իրենց գործունէութեան առաջին հանգրւանում Սրբազան Հօր օրհնութիւնն ստանալու:

Սրբազան Հայրը ջերմօրէն ողջունել ու շնորհաւորել է վարչութեան նորընտիր կազմին եւ անհրաժեշտ թելադրութիւնները կատարելով, յաջողութիւն մաղթել նրանց նուիրական առաքելութեան մէջ:



Նոյեմբերի 25-ին, Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանն իր գրասենեակում ընդունել է Թեհրանի Փերիոյ Կրթասիրաց միութեան վարչութեան ներկայացուցիչներին, ովքեր այցելել են Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ օրհնութիւնը խնդրելու միութեան հիմնադրման եւ գործունէութեան 32-ամեակին նուիրուած նախաձեռնութիւնների համար, նշելով նաեւ, որ այս տարի լրանում է Փերիոյ Կրթասիրաց Միութեան Սպահանի մասնաճիւղի 95-ամեակը:

Հանդիպման ընթացքում վարչութեան ատենապետ Գասպար Ամիրխանեանը, հակիրճ զեկուցել է միութեան գործունէութեան եւ ընդհանուր աշխատանքների մասին:

Սրբազան Հայրը ջերմօրէն ողջունել եւ յաջողութիւն է մաղթել նրանց աշխատանքներին:

**Ազգային առաջնորդարանի**
**Հանրային կապի գրասենեակ**

ՄՇԱԿՈՅԹ

# Հայկական ֆիլմերի յատուկ ցուցադրութիւն՝ Թբիլիսիի միջազգային կինոփառատօնում



Հայ կինոյի 100-ամեայ յոբելեանի կապակցութեամբ Հայաստանի ազգային կինոկենտրոնը Թբիլիսիի միջազգային կինոփառատօնի հետ համատեղ, նոյեմբերի 27-ից անցկացնում է հայկական ֆիլմերի յատուկ ցուցադրութիւն (Country in focus Armenia):

Ինչպէս նշւած է կինոփառատօնի էջում, հայկական ֆիլմերն ընդգրկում են մէկդարեայ կինոժառանգութիւն, խորանում են թեմաների մէջ, որոնք կապւած են ժամանակակից քաղաքակրթութիւնը ձեւաւորող հիմնարար խնդիրների հետ:

Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից ներկայացւած են 11 հայկական ֆիլմեր, որից «Լուկա» ֆիլմը փառատօնի կողմից ընդգրկւել է «Եւրոպական ֆիլմերի» ծրագրում, իսկ 10-ը ֆիլմեր ներառւած են «Country in focus Armenia» ծրագրում:

Այդ ծրագրերում ներկայացւել են հայկական կինոժառանգութեան դասական ֆիլմեր եւ ժամանակակից հայկական ֆիլմեր, որոնք Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից ստացել են պետական ֆինանսական աջակցութիւն:

ՍՓԻՒՌՔ



# Կրասնոդարի հեռուստաալիքը պատմել է հայ ընտանիքի մասին, որն աւելի քան 80 տարի է նուիրել ուսուցչութեանը

Կրասնոդարի հեռուստաալիքը խօսել է հայ Սագրադեանների ընտանիքի մասին, որն աւելի քան 80 տարի է նուիրել ուսուցչութեանը:

Տոհմի սկիզբը դրել է Սաթենիկ Գրիգորեւնան: Նա ծնւել է Հայաստանում, 1915 թւականին յայտնւել մանկատանը: Նա անգլերէն է սովորել, ապա աւարտելով մանկավարժական ինստիտուտը՝ դասաւանդել տարբեր տարիքի ուսանողների: Նրանց թւում էր նրա ապագայ ամուսինը՝ Նիկոլայ Սագրադեանը:

Նրանց ընտանիքը խօսում էր ռուսերէն, հայերէն եւ անգլերէն: Դուստր Ռուզաննա Նիկոլաեւնան համալսարանից յետոյ վերադարձել է հայրենիք եւ աշխատել դպրոցում եւ ինստիտուտում:

1988-ի Սպիտակի երկրաշարժը խլել է ընտանիքի մեծ մասի կեանքը, սակայն ուսուցիչների շարքը չի ընդհատւել: Անահիտ Սագրադեանը աշխատել է որպէս տարրական դասարանների ուսուցչուհի, իսկ ամուսնութիւնից յետոյ տեղափոխւել է Կուբան եւ դասաւանդել թիւ 93 դպրոցում:

**Alphanews.am**

# Ո՞վ կը վախնայ ՀՅԴ-էն



1. Քեսապի ժողովրդային տունը՝ «Գրադարանը» 1951-ին:
2. Քեսապի ժողովրդային տունը՝ «Գրադարանը» ներկայիս:

Սիրիոյ հիւսիսը ու Հայաստանի արեւմուտքը գտնուող մեր դարաւոր ոսոխին՝ Թուրքիոյ մէջ 1980 թուականին, տեղի ունեցաւ զինուորական պետական յեղաշրջում, ու նախագահ դարձաւ զօր. Քենաան Էւրեն (1980-1989): Անոր օրով վարչապետութեան աթոռը զբաղեցուց Թուրգութ Էօզալ (1982-1989), ապա ան նախագահ դարձաւ (1989-1993):

Թուրգութ Էօզալ այն մարդն էր, որ իր կատարած պատմական այցելութենէն՝ դէպի արեւելքի թրքախօս երկիր, վերադարձին յայտարարութիւն մը կատարեց՝ ըսելով. «Հայերը պատմութենէն դաս չեն քաղած»: «Արցախի գոյապայքարի, ապա ազատագրական պայքարի օրերն էին, եւ Էօզալի յայտարարութիւնը կը զուգադիպէր ու կառնչուէր Արցախի պայքարին:

Մեր ազատամարտիկներու յաղթանակները սկսան այդ օրերէն, այդ յայտարարութենէն ետք, երբ փոխուեցաւ Ռուսիոյ արտաքին քաղաքականութիւնը Թուրքիոյ հանդէպ: Թէ ինչո՞ւ. հարցումը պէտք է ուղղել թերեւս Մոսկուային, մանաւանդ անոր այդ օրերու պաշտպանութեան նախարար զօր. Շափոշնիքովին:

Զօր. Էւրենի յեղաշրջումը յաջորդած էր 1970-ականներէն ետք, Բուլենթ Էջեւիթ-Սուլէյման Դեմիրէլ վարչապետներուն մրցավազքերուն, երբ արդէն սկսած էին քրդական ազատագրական շարժումները ուժեղանալ, ինչ որ աւելի լուսարձակ կը սփռէր Թուրքիոյ քաղաքական բեմին վրայ:

Աւելորդ նշում պիտի չըլլայ աւելցնել, որ Էօզալի ժամանակաշրջանին իրարու յաջորդեցին՝ Մեսուդ Եըլմազ, Նեջմեդդին Էրբաքան ու Թանսու Չիլլեր, մինչեւ 1999, երբ սկսաւ Աբդուլլա Գիւլ – Էրդողան ժամակաշրջանը:

Զօր. Քենաան Էւրենի օրերուն Սիրիոյ հետ Թուրքիոյ սահմանային իրավիճակը շատ անհանգիստ էր: Անցեալ դարու 50-ական թուականներուն սահմանային ապահովութեան համաձայնագիր մը կնքուած էր Սիրիոյ (Էդիբ Չիչեքլիի օրերուն) եւ Թուրքիոյ միջեւ, որով Թուրքիա յանձնառութիւն ստանձնած էր իր բանակով հսկելու եւ ապահով դարձնելու սահմանը, որուն դիմաց Սիրիա յանձն կառնէր միայն ոստիկանատուներ կառուցել ու ոստիկաններով կատարել սահմանային հսկողութիւնը:

Վերոյիշեալ համաձայնագրին պատճառով, Էւրենի օրերուն, սահմանին հաստատուած թուրք զինուորները դարձած էին շփացած ու յարձակողապաշտ: Ամենօրեայ ոտնձգութիւնները անպակաս էին նոյնիսկ ծննդավայրիս՝ Քեսապի սահմանային հատուածին վրայ:

Զօր. Էւրենի իշխանութեան վերջին տարիներուն Թուրքիոյ մէջ սկսան փչել «թրքավարի» ժողովրդավարութեան հովեր:

Սուրիոյ հետ յարաբերութիւնները համեմատական մեղմացում ապրեցան, որուն յաջորդեց սահմանային վայրերու վրայ գտնուող բնակավայրերու բնակչութեան փոխադարձ հանդիպումներ՝ երկուստեք: Այս հանդիպումները անոնք «կէօրըշմա» (տեսակցութիւն՝ թուրքերէն) կը կոչէին: Քեսապ ալ «բախտը» ունեցաւ «վայելելու» կէօրըշմաներ:

Այսօր անկարող եմ վերյիշելու ճշգրիտ թուականը, սակայն պայծառօրէն կը յիշեմ, որ «կէօրըշմայի» մը ընթացքին Քեսապ ժամանած էր Քեսապի հանդիպակաց կողմը գտնուող թուրքական Եայլադաղ քաղաքին քաղաքապետը: Կարճ ու սատանայածին ծերուկ աղուէս մըն էր ու ման կու գար հրապարակին վրայ՝ դիտելով վաճառատուներու ցուցափեղկերը:

Այստեղ շունչ մը քաշելով՝ ըսեմ, որ Եայլադաղը, նախքան Ալեքսանդրետի նահանգը (Սանճագը), Սիրիայէն խլելով եւ Թուրքիոյ նուէր տրըւելով՝ «հոգատար» ասպետական ֆրանսական իշխանութիւններուն կողմէ, կը կոչուէր Օրդու, որուն բնակիչները միայն թուրքեր չէին, այլ հոն կը բնակէին յոյներ, քրիստոնեայ եւ ալեւի արաբներ:

Եայլադաղի վերածուած Օրդուն Հայոց Ցեղասպանութեան օրերուն քեսապահայութեան տարագրութեան առաջին հանգրւանն էր: Անկասկած որ գայմագանիստ Օրդուի եւ մերձակայ բնակավայրերուն թուրքերը ձիթենիի ոստերով չէին դիմաւորած տարագրեալները, ընդհակառակը, գործած էին ամէն տեսակի խժդըժութիւններ ու վայրագութիւններ, ապա նաեւ կողոպտած էին Քեսապը իր գիւղերով, միայն թէ հրդեհի չէին տուած, ինչպէս կատարած էին Ադանայի կոտորածներուն ժամանակ (1909-ին):

Ա Աշխարհամարտի աւարտէն ետք, նախքան ֆրանսական բանակային ուժերու Քեսապ եւ աւելի անդին հասնիլը, շրջանին մէջ կը տիրէր անիշխանութիւն եւ անապահովութիւն: Թուրքական հրոսակախումբերու ասպատականութիւնները անպակաս էին վերստին ապրելու համար մաքառող Քեսապին մէջ:

Այդ ժամանակաշրջանին (1918-1922) քեսապցիք կազմած էին Ազգային միութեան իշխանութիւնը, որուն ողնաշարը ՀՅԴ-ն էր, եւ որուն բազուկի ուժը հանդիսացած էին դաշնակից բանակներուն մէջ ծառայած ու անկէ հեռացած քեսապցի կամաւորները, մարտիկները (տե՛ս Հայկազ Թոթոեանի «Քեսապի փոքրիկ հանրապետութիւնը» գիրքը):

Ազգային միութեան իշխանութիւնը յանձնառու կըլլայ իր կամաւորներով վնասազերծելու շրջանը այդ հրոսակախումբերէն, որոնց գըլխաւոր որջը դարձած էր Եայլադաղ-Օրդուն, ուստի ան ալ կը ստանայ իր բաժինը այդ վնասազերծումէն: Այդ մէկը ապահովութիւն կու տայ նոյնիսկ Քեսապէն դուրս յոյն ու արաբ բնակչութեան:

«Կէօրըշմայի» եկած աղուէս քաղաքապետը, ըստ երեւոյթին, քաջատեղեակ էր վերոյիշեալ պատմութենէն, ու երբ մենք մեր անճոռնի ու կոտրած թուրքերէնով հետը որպէս թէ «մտերմիկ ու անկեղծ» զրոյցի բռնուեցանք, ան յանկարծ հարց տուաւ.

- Ո՞ւր կը գտնուի Քեսապի «գրադխանան»:

Իր փնտրածը Քեսապի Ժողովրդային տունն էր, որուն մէջ գըտնըւող հինաւուրց գրադարանին պատճառով քեսապցիք զայն ակումբ անւանելու փոխարէն «Գրադարան» կը կոչէին:

«Գրադխանա»՝ գրադարանը ՀՅԴ-ի ակումբն էր: Ու ծերունի քաղաքապետին փնտրածը Դաշնակցութեան ակումբն էր, Ազգային միութեան իշխանութեան գոյատեւութենէն 80-85 տարիներ ետք:

Անոր սրտին ու մտքին մէջ առկայ էր Դաշնակցութեան առթած վախը:

Վերոյիշեալ երկար յառաջաբանէն ետք, որպէս մէկը, որ քաջածանօթ է հայոց թէ Դաշնակցութեան պատմութեանց, ու ակնարկս միշտ սեւեռած՝ (նոյնիսկ Քեսապէն) մերօրեայ ժամանակներուն ու ելեւէջներուն վրայ, ես ինծի հարց կու տամ.

– Ո՞վ կը վախնայ ՀՅԴ-էն:

Անկասկած որ 133-ամեայ Դաշնակցութիւնը նոյնը չէ ու չի կրնար ըլլալ մէկ ու քառորդ դարու տասնամեակներէ ի վեր: Հայ կեանքի դրական թէ ժխտական յարափոփոխ իրավիճակէն անջատուած ու անցեալին մէջ խրած չի կրնար ըլլալ ՀՅԴ-ն:

Հիմա մենք կապրինք 21-րդ դարուն մէջ՝ իր միջազգային թէ ազգային, քաղաքական, տնտեսական ու հասարակական պայմաններով, ու չենք կրնար մենք մեզ տեղաւորել տասնամեակի մը մէջ:

Սակայն 133-ամեայ Դաշնակցութեան ազգային գաղափարախօսութիւնը նո՛յնն է. ան միայն բարեփոխուած ու պարզեցուած է, անոր ազգային՝ խորքն ու բովանդակութիւնը նո՛յնն է:

Եթէ ազգութեան էութիւնը ունի հիմնաքարեր, անոնք են՝ լեզուն, պատմութիւնը, դարաւոր կեանքի պատմական հողաշերտը, հոգեհէն հարստութիւնները, կրօնը, հաւատալիքներն ու ապագայի համար անոր տեսիլքները, եթէ ասոնք հայ ազգին ինքնութիւնը կազմող բաղադրիչներն են, ապա ՀՅԴ-ն զանոնք դարձուցած է իր գաղափարախօսութեան առանցքը, հիմքն ու յանձնառու եղած է պահելու, պահպանելու ու գործադրութեան դնելու զանոնք: Եւ այդ յանձնառութիւնն է, որ զինք պահածպահպանած է ու առաջնորդած, անցնող 133 տարիներուն:

Այդ ազգային գաղափարախօսութիւնն է, ուժն է, որ զայն՝ ՀՅԴ-ն, միշտ պահած է ազգային պատնէշին վրայ՝ Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի տարածքներուն:

Այդ գաղափարախօսութիւնն էր, որ զինք առաջնորդեց արցախեան գոյապայքարին, ազգային ազատագրական պայքարին:

Դաշնակցութեան գաղափարախօսութիւնը զինք առաջնորդեց հանդիսանալու հայութեան պաշտպանը Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն թէ այլ վտանգւած բնակավայրերուն մէջ:

Նոյն յանձնառութեամբ ան պաշտպանը դարձաւ 1970-ական թուականներէն ետք Հայոց Ցեղասպանութեան ճանաչումին դիմաց քաշուած լռութեան պատ քանդելու սփիւռքեան զինական պայքարի՝ ցեղասպանութեան արդարութեան եւ հատուցման պայքարի ելած հայորդիներուն եւ յաճախ ալ իր գաղափարներով սնուցած է զանոնք:

Դաշնակցութիւնը այդպէս եղած է ու կը շարունակէ այդպէս մնալ ցայսօր:

Արեամբ հաստատուած ու փաստըւած իրողութիւն է, որ Դաշնակցութեան ազգային, անարատ ու անսակարկ գաղափարախօսութիւնը ուժ է, որքան ալ իր աշխարհացրիւ կառոյցները ազդուին համաշխարհային մակընթացութիւններէն թէ տեղատուութիւններէն:

Իր ազգային գաղափարախօսութիւնը ուժ է՝ պահելու ու պահպանելու, ապա նաեւ հզօրացնելու մեր ազգային ինքնութիւնը, որքան ալ դաժան ըլլան մեր ազգին գլխուն տեղացող ամէնօրեայ հարուածները:

Դաշնակցութեան ազգային գաղափարախօսութիւնը անառարկելի պաշտպան ուժն է իսկական ազգային դաստիարակութեան ու կրթութեան հայեցակարգին, որ ահ ու սարսափ կը պատճառէ արտաքին ու մանաւանդ ներքին ապազգային ուժերուն՝ սկսած աւատատիրական, դրամատիրական, ազատական, համայնավարական ու նոր-համայնավարական ուժերուն՝ թշնամիներուն:

Արցախի դժբախտ հայաթափման իրականութեան դիմաց, հայութեան մռայլ իրականութեան դիմաց, մերօրեայ ապազգային իշխանութիւնները խորքին մէջ Դաշնակցութեան հոգեղէն ուժերէն, ազգային գաղափարախօսութենէն է, որ կը վախնան, կը վախնան իսկական ազատ, անկախ ու միացեալ (Արցախը ներառեալ) Հայաստանի մը տեսիլքէն, որուն կը ձգտի ՀՅԴ-ն:

Ցեղասպանութեան հատուցման, պահանջատիրութեան հոգեղէն ուժն է անոնց վախի աղբիւրը:

Ինծի համար անհասկնալի է ու այդպէս կը մնայ հայրենի

(Շար. 6-րդ էջում)

# Լոյս է տեսել ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի 2023 թ. 11-րդ համարը




Համացանցի վրայ այսօրուանից ներկայացւող «Դրօշակ» պարբերականի՝ նոր համարը ունի թեմատիկ բնոյթ՝ այն ամբողջովին նւիրւած է Սփիւռքի հիմնահարցերին, վերակազմակերպման եւ զարգացման խնդիրներին, ինչպէս եւ Հայրենիք-Սփիւռք փոխյարաբերութիւններին, ընդհանուր ռազմավարութեանն ու նպատակներին: Յօդւածների հեղինակները, լինելով Հայաստանից, Արցախից եւ Սփիւռքի տարբեր համայնքներից, Կլոր սեղանի շրջանակում տեսակէտներ են յայտնում առաջադրւած հարցերի վերաբերեալ, կարծիքներ են ներկայացնում այլ հեղինակների տեսակէտների շուրջ:

Կլոր սեղանի ձեւաչափով այս քննարկումը տեղի է ունեցել որոշակի ժամանակահատւածում եւ սկիզբ է առել այն ժամանակ, երբ դեռ տեղի չէր ունեցել Արցախ օկուպացման եւ հայաթափման ցեղասպանական գործողութիւնը: Համարի լոյս ընծայումից առաջ խմբագրակազմը անդրադարձել է այս իրողութեանը եւ որոշել է եղած յօդւածները լոյս ընծայել այնպէս ինչպէս կան, երբ մասնաւորապէս, հրապարակւած նիւթերում, բնականօրէն, բացակայում են մեծ ողբերգութիւնն արձագանգները:

Ձեռնամուխ լինելով այս նախաձեռնութեանը պաշտօնաթերթի խմբագրակազմը նկատի ունեցաւ կուտակւած հիմնահարցերը եւ ակնկալում է, որ սկսելով այս համազգային նշանակութեան խօսակցութիւնը կարող է խթանել վերջինիս ծաւալմանը եւ արդիւնաւէտ լուծումների որոնմանը: Տարբեր մայրցամաքներ ու երկրներ ներկայացնող յօդւածների հեղինակները կուսակցական եւ ոչ կուսակցական մտաւորականներ են, մտորումներով կիսւում է նաեւ հոգեւոր դասի ներկայացուցիչը: Բոլոր այս յարգարժան անհատները հնարաւորութիւն են ունեցել ազատօրէն ներկայացնելու իրենց գնահատականներն ու տեսակէտները: «Դրօշակ»-ի խմբագրակազմը ակնկալում է, որ սկսւած խօսակցութիւնը կունենայ շարունակութիւն՝ ներգրաւելով հայրենի եւ սփիւռքահայ այլ անւանի մտաւորականների ու գործիչների, որոնց տեսակէտների համար առաջիկայում եւս պաշտօնաթերթը սիրով կը տրամադրի իր ամբիոնը:

«Դրօշակ»-ի 2023 թ. 11-րդ համարը համացանցում կարող էք գտնել droshak.am հասցէի ներքոյ:

**«Դրօշակ» թիւ 11 2023 թ.**




## Լոյս է տեսել «ՎԷՄ» մատենաշարի 6-րդ հատորը, որը ներառում է Արմինէ Հ Տիգրանեանի՝

## «THE ARMENIAN CULTURAL HERITAGE OF ARTSAKH Mechanisms for Protection in the International System for Preservation of Heritage»

## անգլերէն աշխատութիւնը՝ 216 էջ ծաւալով:

Աշխատութիւնն առաջիկայում լոյս կը տեսնի նաեւ հայերէն որպէս «Վէմ» մատենաշարի 7-րդ հատոր եւ նախատեսւած է լինելու հայկական յուշարձանների պաշտպանութեան վերաբերեալ յատուկ դասընթացներ կազմակերպելու համար:

Անգլերէնով հրապարակւած Արմինէ Հ Տիգրանեանի աշխատութեանը կցւած է վերջին տարիներին Արցախում աւերւած հայկական յուշարձանները պատկերող լուսանկարների ծաւալուն փաթեթ: Աշխատութեան խմբագիրներն են հնագէտ-մշակութաբան Համլետ Պետրոսեանը եւ «Վէմ» հանդէսի խմբագիր՝ Գէորգ Խուդինեանը, թարգմանիչը՝ Զարուհի Արեւշատեանը:

«Վէմ» մատենաշարի հերթական հատորը օտարերկրեայ ընթերցողին ու քաղաքական շրջանակներին է ներկայացնում մշակութային ժառանգութեան պաշտպանութեան ասպարէզում կուտակւած համաշխարհային փորձը, նախորդ տասնամեակների ընթացքում ընդունւած իրաւական ուժ ունեցող փաստաթղթերը եւ դրանց կիրառման միջազգային պրակտիկան:

# «Երջանկութեան մեխանիկա»-ից մինչեւ «Ծագումով հայեր»



***«Մամ, դու էլ պարի». յիշեցի՞ք «Երջանկութեան մեխանիկա» ֆիլմի դրուագը, երբ Սոնան երեխաների հետ հիւր էր գնացել Ռուբէնին: Մինչ փոքր քոյրն ու սրտնեղած եղբայրը լուռ նստել էին թախտին, Աննան ինքնամոռաց պարում էր Ժօ Դասենի «Տակա, տակատա» հիթի ներքոյ: Թէեւ հայկական սիրուած ֆիլմի փոքրիկ հերոսուհուն հանդիսատեսն այլեւս չտեսաւ մեծ էկրանին, նա տեսախցիկից մինչ օրս չի բաժանուել: Մասնագիտութեամբ ռեժիսոր Մանանա Յակոբեանը ոչ միայն վաւերագրական ֆիլմեր է նկարում, այլ նաեւ յայտնի է իր հեղինակային «Ծագումով հայեր» հաղորդաշարով:***

*- Ֆիլմում երեխաներից ամենաակտիւը Ձեր կերպարն էր, քանի որ Սոնայի միւս աղջիկը բաւական փոքր էր, իսկ տղան այն տարիքում էր, որ դժկամութեամբ էր ընդունում մօր անձնական կեանքի փոփոխութիւնները: Կեանքո՞ւմ էլ էիք այդքան աշխոյժ, թէ՞ կարողացել էիք մտնել դերի մէջ:*

- Հայրս (Հրանտ Յակոբեան-խմբ.) ֆիլմի երկրորդ ռեժիսորն էր, եւ քանի որ ֆիլմի ամբողջ անձնակազմը՝ սկսած Ներսէս Գեղեօնիչից (ֆիլմի ռեժիսոր Ներսէս Յովհաննիսեան-խմբ.), ինձ ճանաչում էին, բոլորը միաձայն համաձայն են եղել, որ պէտք է փորձեմ այդ դերը:

*- Դա Ձեր առաջի՞ն դերն էր կինոյում:*

- Չէ, դեռ հինգ տարեկանում եմ նկարահանուել ֆիլմում. Վիոլետա Գէորգեանի ֆիլմն էր, որը, չգիտեմ, թէ ինչ պատճառներով, եթեր չհեռարձակուեց, կոչւում էր «Ամենալաւ մարդը»: Դրանից յետոյ եղաւ «Երջանկութեան մեխանիկա»-ն եւ էլի փոքր-մոքր բումերանգներ:

*- Իսկ «Երջանկութեան մեխանիկա»-ում նկարահանուելու ժամանակ քանի՞ տարեկան էիք:*

- Դպրոցական էի՝ ութ տարեկան, լաւ յիշում եմ ոչ միայն իմ դրւագները, այլ նաեւ բոլորինը: Չեմ մոռանայ, երբ մի անգամ Ներսէս Գեղեօնիչն ասաց՝ «Այ Ալլա, լաւ էլի, էս ութ տարեկան երեխային մի դուբլից նկարում ենք, քեզ հետ տառապում ենք» (ծիծաղում է,-խմբ.): Շատ սիրում էի նկարահանումները, ապրում էի դրանով, այդ պատճառով դերը շատ հեշտ էր տրւում: Նկարահանումը մօտ մէկ տարի տեւեց: Իմ դերերն այնքան շատ չէին, բայց միշտ մասնակցում էի նկարահանումների: Պապայի հետ յամառօրէն միշտ գնում էի եւ ասում՝ խաղամ-չխաղամ, պէտք է գամ նկարահանման հրապարակ:

*- Փաստօրէն, Ձեր մանկութեան վառ դրւագներից է:*

-Հաւատացէք՝ հա: Այդպէս էլ պէտք է լինէր. ծնւած ես կինոյում՝ այդպիսի ընտանիքում, առանձին մի կտոր չի, որ այսօր կանչեցին, նկարեցին, ուռա՛, ծափահարեցին, ու գնացիր: Չէ, միշտ եմ դրա մէջ եղել:

*- Իսկ յետոյ Ձեր ճանապարհն ինչպէ՞ս շարունակեցիք:*

- «Երջանկութեան մեխանիկա»-ով հիացած էի, իհարկէ: Ինձ բոլորը ճանաչում էին, դրանից շատ լաւ էի զգում: Նկարահանումները, պրեմիերան, կինոաշխարհի այդ ընթացքը տպաւորում եւ ֆիքսւում է մէջդ: Եւ երբ հայրիկիս ասացի՝ ուզում եմ դերասանուհի դառնալ, ասաց՝ ոչ մի դէպքում, կտրականապէս դէմ է, շատ տանջանք է: Արդէն Թատերական ինստիտուտի քննութիւններին էի պատրաստւում, բայց պապան յամառեց: Ու թէեւ 20 բալ ստացայ դերասանի վարպետութիւնից, ռեժիսուրայի ֆակուլտետ գնացի: Յետոյ տարւեցի ֆրանսերէնով, տարկետում վերցրի, մեկնեցի Ֆրանսիա: Այնտեղ կինոդպրոցի մի քանի դասեր անցայ, վերադարձայ ու շարունակեցի ուսումս: 1993-ին գնացի, 1995-ին եկայ, ամուսնացայ, զաւակ ունեցայ, այդ ընթացքում աւարտեցի ինստիտուտն ու ամբողջովին կտրուեցի կինոաշխարհից. աշխատում էի բանկում, Ֆինանսների նախարարութիւնում, որն ինձ հետ ոչ մի կապ չունէր:

*- «Ծագումով հայեր» հաղորդման ծնունդը կարո՞ղ ենք ընդհատուած ստեղծագործական ուղու շարունակութիւնը համարել:*

- Հաղորդման հիմքը 2004-ին դրուեց: Շնորհակալ եմ Արծւի Բախչինեանին, որի գրքի հիման վրայ ստեղծեցինք համանուն հեռուստատեսային ծրագիրը: Դաժան աշխատանքներ էին աշխարհով մէկ. գտնում էինք լեգենդար եւ յայտնի հայերի, որոնք նոյնիսկ չգիտէինք, որ հայ են: Հաղորդումն ինձնից մեծ միջոցներ, ջանքեր էր պահանջում: Այնքան բարդ օրեր եմ ունեցել, որ չէք էլ պատկերացնի: Բայց հիմա, երբ անցել են այսքան տարիներ, ասում եմ՝ դեռ կարողանում եմ այս երեխային պահել, իսկ ինձ համար այն երկրորդ բալիկ է: Ոչ թէ բիզնես էր, եկամտի աղբիւր, այլ սէր դէպի կինօն, էկրանը: 400-ից աւելի հաղորդում արդէն նկարել եմ: Նաեւ վաւերագրական ֆիլմեր եմ նկարում: Նոյեմբերի 30-ին շատ ծանր պրեմիերա ունեմ Լոս Անջելէսում: Արցախի թեմի 30-ամեակին նուիրուած ֆիլմ է, կոչւում է «Սպիտակ խաչի պաշտպանը», եւ գլխաւոր հերոսը Պարգեւ Սրբազանն է:

*- Իսկ Ձեր բանկային կարիերան այդպէս էլ աւարտուե՞ց:*

- Իհարկէ, դա ընդամէնը ժամանակաշրջան էր, երբ պարզապէս պէտք էր աշխատել, կեանքի տուած հարուածներին դիմակայել:

*- Ձեր մարմնաւորած կերպարի ընտանիքում չկար հայրիկը, կային մայրիկը, քոյր եւ եղբայրը: Իսկ Ձեր ընտանիքի մոդելն ինչպիսի՞ն էր:*

- Ծնողներս նոյնպէս կինոռեժիսորներ են՝ Հրանտ Յակոբեան եւ Ռուզաննա Յակոբեան, նաեւ իմ սցենարիստն է մայրս, հայրս մինչեւ հիմա աշխատում է վաւերագրական ֆիլմերի ասպարէզում: Եղբայրս՝ Վարդան Յակոբեանը, ինձնից շատ աւելի առաջ գնաց կինոասպարէզում. աւարտեց Մոսկւայի Գերասիմովի անուան կինեմատոգրաֆիայի համառուսական պետական ինստիտուտը, յետոյ ընդունուեց հոլիվուդեան կինոակադեմիան: Շատ նպատակասլաց է, եւ կարծում եմ՝ տաղանդաւոր ռեժիսոր է: Գիտէք իր ֆիլմերը՝ «Պլատոն», «Իմ անունն է երջանկութիւն»... Աղջիկս նոյնպէս թատերական ինստիտուտն է աւարտել, պրոդիւսեր է, այսինքն՝ ճիւղերը շարունակւում են: Ի դէպ, օրեր առաջ էլ տատիկ դարձայ, կարծում եմ՝ նա էլ մեր ուղղութեամբ կը գնայ (ծիծաղում է,-խմբ.):



*Մանանա Յակոբեանը հայրիկի՝ Հրանտ Յակոբեանի հետ*

*- Ձեր ֆիլմային ընտանիքի հետ կապերը պահո՞ւմ էք:*

- Այո՛, իհարկէ, բոլորի հետ՝ ե՛ւ Ռազմիկ Մանսուրեանի, ե՛ւ Ալլա Թումանեանի... Միասին խնջոյքների ենք գնում, հազար ու մի բան. միշտ կապի մէջ ենք: «Երջանկութեան մեխանիկա»-ն իմ մանկութեան ամենալուսաւոր, ամենայիշարժան կէտն է: Ռազմիկ Մանսուրեանը որոշել էր, եւ մենք ոգեւորուել էինք իր գաղափարով, որպէսզի «Երջանկութեան մեխանիկա 2» լինի, բայց քանի որ Հրաչ Քեշիշեանը նոյն անուանումով սերիալ է նկարել, ուզում ենք հասկանալ խնդիր կարո՞ղ է առաջանալ, թէ՝ ոչ: Այդ հարցը հիմա ուզում ենք վերանայել, որպէսզի լինի շարունակութիւնը ֆիլմի հերոսներով: Լիլիթ Խաչատրեանը՝ Յարութիւն Խաչատրեանի աղջիկը, որը ֆիլմում իմ քոյրն էր, երբ իմացաւ գաղափարի մասին, ոգեւորուեց, ասում է՝ ինքն առաջինն է գալիս: Այնպէս որ, «Երջանկութեան մեխանիկա»-ն չի աւարտուել ու գնացել. դրանք մեր կեանքի լաւագոյն օրերից էին:

**Զրուցեց՝ Անահիտ Փիլոսեանը/ Bravo.am/**
**Լուսանկարները՝ Մանանա Յակոբեանի անձնական արխիւից**

## Հեռախօս «ԱԼԻՔ»-ին

*Պատկերացնո՞ւմ էք այն պահը, երբ յուղարկաւորութիւնից րոպէներ առաջ պարզւում է, որ ննջեցեալը քո հարազատը չէ, իսկ իմ պարագայում մայրս եւ դիահերձարանից դագաղը ստանալուց յետոյ միայն պարզւեց, որ ննջեցեալը մայրս չէ:*

*Անգամ վիշտն է վերափոխւում, երբ բախւում ես այս անմարդկային եղելութեան հետ, գլխիվայր շրջւում է ամէն ինչ:*

*Չեմ ուզում, նաեւ չեմ կարող մտածել, թէ ինչ հոգեվիճակում կը յայտնուէինք, եթէ բանը պարզուէր յուղարկաւորութիւնից յետոյ, կամ, եթէ արդէն մօրս ինչ-որ մէկը թաղել էր որպէս իր հարազատ: Չեմ ուզում երեւակայել անգամ այդ մարդկանց շփոթմունքը եւ ապրումը, ինչպէս, նաեւ ինչ-որ մէկը յայտնուի այն հանգամանքում, որում ես եղայ:*

*Ի յարգանս մեր ապրած ազնիւ կեանքի, սգոյ թափօրում ներկայ էին այլ ազգի եւ այլ հաւատի մարդիկ: Անկեղծ ասած նոյնիսկ վախենում եմ մտածել թէ ի՞նչ են խորհում նրանք հիմա կատարուածի վերաբերեալ: Ի՞նչ են ենթադրում մեր բարոյական նկարագիրն ու արժանապատւութիւնը պահպանող այն կառոյցների մասին, որոնք կոչուած են պետութեան եւ Աստծոյ համատեղումը վեհ ու անաղարտ պահելու… ինչ են նրանք մտորում, եթէ ոչ մեր ազգի եւ մեր ինքնութեան, ապա գոնէ իրենք իրենց մասին…*

**ԱՆԱՀԻՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ**

***«ԱԼԻՔ»-ը կապ հաստատելով ազգային իշխանութեան պատկան բաժնի եւ ննջեցեալի բնակելի տարածքի ծխատէր քահանայ Տ. Սահակ Խոսրովեանի հետ, ով կատարել է թաղման կարգը եւ հետեւելով հարցին ներկայացնում է ստացւած բացատրութիւնը, որը յուսանք կը փարատի մեր հայրենակցի մտահոգութիւնը:***

***Ստացւած բացատրութեան համաձայն, Նոր Բուրաստան գերեզմանատանը յուղարկաւորութիւնից առաջ ննջեցեալների հարազատները մեկնում են բուրաստանի դիահերձարան, որպէսզի անձամբ ճանաչելով իրենց ննջեցեալին, ստանան հանգուցեալի դին, որպէսզի որեւէ սխալ տեղի չունենայ, քանի որ նրանք ճանաչելով իրենց ննջեցեալին փակում են դագաղը: Ապա դին փոխադրւում է եկեղեցի եւ որոշ պարագաներում թաղման կարգից առաջ եկեղեցու դիմացի քարէ սեղանի վրայ ոմանք նոյնիսկ ցանկանում են վերջին հրաժեշտը տալ իրենց հանգուցեալին:***

***Առողջութիւն եւ յաջողութիւն ենք մաղթում մեր սիրելի հայրենակիցներին:***



## Ո՞վ...

(Շար. 5-րդ էջից)

*իշխանութիւններուն քաղաքական վարքագիծը, թէ ինչո՛ւ եւ ինչպէ՛ս կը յանդգնին քանդել մեր հոգեղէն ազգային բերդը:*

*Երբ «ազգային» գաղափարը կընդգծեմ, միշտ հեռու կը մնամ նացիական-ֆաշական իմաստներէն:*

*Վերջերս ականջալուր եղանք, որ Հայաստանի վարժարաններուն 7-րդ կարգերուն համար պատրաստւած հայոց պատմութեան դասագիրքերուն մէջէն վերցւած ու խեղաթիւրւած են այնպիսի իրողութիւններ, որոնք կու գան ջուր լեցնելու թշնամիին ձգտումներուն, որոնք կաշխատին կասկածի տակ առնել հայկականն ու հայութիւնը: Թշնամին գիշեր ու ցերեկ, հետեւողականօրէն կաշխատի խեղաթիւրել հայոց պատմութեան իրողութիւնները, աւելի՛ն. կաշխատի վերացնել հայութիւնն ու Հայաստանը: Իսկ մենք ատոր դիմաց, փոխանակ ամրապնդելու մեր հոգեմտաւոր բերդը, զայն մաս առ մաս կը փլուզենք:*

*Այսպէս, թշնամին մեր կրթական համակարգը ողողած է հակահայ շինծու գաղափարներով: Օր ու գիշեր կը քանդէ մեր ազգային հարըստութիւնները, եկեղեցիները, խաչքարերը, պատմական կոթողները: Պատմութիւնը խեղաթիւրելով՝ Երեւանը կանւանափոխէ Էրիւան (կամ Իրիւան) ու կոչ կընէ զայն բռնագրաւելով իւրացնելու, ա՛լ ինչ խօսք բարձրիկ Սեւանին մասին: Թըշնամին կիւրացնէ մեր երգը, պարը՝ հասնելով մինչեւ մեր խոհանոցը: Իսկ մենք ի՞նչ կընենք մեր ինքնութեան միջնաբերդը՝ հայոց պատմութիւնը, մեր պաշտպանողական հզօրագոյն աշտարակը կանգուն պահելու:*

*Գրութիւնս չեմ ուզեր ծանրաբեռնել քաղաքական վերլուծումներով. զանոնք իմս չեմ սեպեր, այլ կը թողում քաղաքագէտներուն:*

*Սակայն, որպէս հայ, որպէս ազգային ու դաշնակցական հայեցակարգի տէր անձ, հաւատացած եմ, որ մեր ազգային գաղափարախօսութիւնն է, որ ահ ու սարսափ կը պատճառէ ներսի թէ դուրսի թշնամիներուն: Եւ անոր համար է, որ անոնց հարուածները կուղղուին այդ գաղափարախօսութեան: Անոր համար է, որ անոնք կը վախնան «հոգեղէն» Դաշնակցութենէն:*

*Երբ «հայեր ենք», կըսենք, ալ ի՞նչ գաղափարախօսութեան պարտինք ծառայել, «կեր, արբ ու լեր» գաղափարախօսութեա՞ն, թէ՞ «Ույ աման, ույ աման, թագաւոր լինելուց լաւ բան, կեր-խմի քէֆ արա շարունակ, աշխարհը խալի է, ոտքիդ տակ»:*

*Այստեղ աւելորդ չեմ նկատեր մէջբերել Միացեալ Նահանգներու նախագահներէն Ռոլանդ Ռիգընի մէկ նշանաւոր ճառը:*

*Ճշգրիտ թուականը չեմ կրնար մտաբերել, սակայն Իսրայէլի կողմէ Լիբանանի բռնագրաւումի տարիներուն էր, երբ Լիբանանեան դիմադրութիւնը, որուն մէջ գերակշիռ տեղ գրաւած էին շիի դաւանանքին պատկանող մարտիկներ, եւ անոնք անձնասպանական արարքներով կը պայքարէին Լիբանանէն հեռացնելու Իսրայէլի բանակը: Այդ ժամանակահատւածին կը զուգադիպէր իր ճառը:*

*Ան մօտաւորապէս այսպէս կարտայայտուէր.*

*-Մենք ամէն ինչ կընենք, որ մեր զինուորներուն կեանք ապահովենք՝ զանոնք լաւապէս սպառազինելով, մինչ անոնք մահը առած են որպէս ռազմավարական, դաշնակից՝ իրենց նպատակին հասնելու համար, որուն դէմ մենք համարեա՛ անզօր ենք:*

*Այսինքն ան կակնարկէր, որ անոնք գաղափարի մարտիկներ էին՝ հայրենիքի թէ կրօնի գաղափարախօսութեամբ տոգորուած: Ու անոնք յաղթեցին. մահւամբ զմահ կոխելով՝ Լիբանանէն դուրս շպրտեցին թշնամին ու ցայսօր կը պայքարին գուցէ նւազ քան 200 քառ. քմ. գրաււած տարածքները ազատագրելու: Տեսէք անցնող օրերուն անոնց կատարած հերոսութիւններն ու սխրանքները՝ ի զօրակցութիւն Պաղեստինի իրենց եղբայրներուն: Այլ խօսքով, իրենց որդեգրած գաղափարախօսութիւնը (1980-ական թւականներէն) զանոնք մղեց հասնելու յաղթանակի, ու թշնամին ցայսօր կը պահեն սարսափի մէջ:*

*Իրենց ազգային-կրօնական-հայրենասիրական գաղափարախօսութիւնը ոչ միայն անառիկ բերդի վերածեց զիրենք, այլ նաեւ մղեց, որ ստանան կամ ստեղծեն այն մոգական զէնքերը, միջոցները, որպէսզի երէկւան հեքիաթային-յաղթական թշնամին այսօր բռնէ եթէ ոչ պարտութեան, այլ գոնէ ինքնապաշտպանութեան ճանապարհը:*

*Զարտուղի հարցադրում մըն ալ աւելցնելով՝ Լիբանանի այդ թշնամին (եւ պաղեստինցիներուն թշնամին) ան չէ՞ր, որ զինեց մեր արեւելեան ոսոխը, որ ոտնատակ ըրաւ մեր Արցախ հայրենիքը:*

*Հասունցած չէ՞ պահը հաւաքուելու, բոլորուելու մեր ազգային գաղափարախօսութեան շուրջ, թէկուզ՝ իւրաքանչիւրը իր երանգներով, հայութեան անխորտակելի միջնաբերդին շուրջ:*

*Նորէն հարց կու տամ.*

*«Ո՞վ կը վախնայ ՀՅԴ-էն»:*

* * *

*Որպէս վերջաբան. վերոյիշեալ խորագիրը տեսնողը պահ մը կրնայ հարց տալ, թէ այս օրերուն ինչո՞ւ այս վերնագիրը:*

*Գուցէ գտնուին մարդիկ, որոնք քմծիծաղով կարդան, թերեւս զայրացողներ ըլլան, ծիծաղողներ ու հեգնողներ ալ, կամ՝ պարսաւողներ:*

*Բայց անպայման պիտի ըլլան յարգելիներ, որոնք նոյն ցաւով կը տառապին:*

*Սակայն կը մնայ մեր միջնաբերդը՝ ազգային գաղափարախօսութիւնը, Դաշնակցութեան գաղափարախօսութիւնը:*

*Այդ մէկն ալ՝ ահ ու վախ պատճառողը:*

**ԿԱՐՕ Վ. ՄԱՆՃԻԿԵԱՆ**
**Քեսապ, 15 Նոյեմբերի 2023**

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ցարգելի հայրենակիցներ,

Այսու յայտնում ենք Ձեզ, որ

**Յ. Մ. «Սիփան» միութեան 60-ամեակին նուիրուած երեկոյ-հանդիսութիւնը տեղի է ունենալու թւականիս՝ ուրբաթ, դեկտեմբերի 15-ին**

Ուստի այս առիթով կարող էք շնորհաւորական ուղերձները ուղարկել միութեանս էլ. հասցէին կամ գրասենեակ

**Էլ. հասցէ: sipanmiutiun@gmail.com**

**Հ. Մ. «ՍԻՓԱՆ» ՄԻՈՒԹԻՒՆ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Անհուն վշտով ցաւակցում ենք սիրելի՝ Ֆրէդ Մելիքեանին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

**ՇԱՀԷՆ ՄԵԼԻՔԵԱՆԻ**

ցաւալի մահուան կապակցութեամբ:

**Հ. Մ. «ԱՐԱՐԱՏ» Կ.**

**ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ**

Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան կողմից ծաղկեպսակի փոխարէն 5.000.000 ռիալ նուիրւում է Թ. Հ. Թ. Կարիքաւորներին օժանդակող մարմնին:

Գումարն ստանալ «Ալիք»-ից:


**ԱԼԻՔ Օրաթերթ**

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



مسافربری بین المللی
www.didarseir.ir
Email:info@didarseir.ir



دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4

نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77821769 • 021-77281288 • 021-77259537
واتساپ 09366955599
اینستاگرام @Didarseiregity

دفتر ایروان
خیابان نالباندیان – شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237

Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով



دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային ուղեւորափոխադրումների 27 տարւայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP հանրակառքով



ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Իշխանուհի Սահակեանին՝ զաւակներով եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ԱՐՏՈՒՇ ԱՒԱՆԷՍԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**ՌԱՇՏԻ ԵԿԵՂԵՑԱ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ**



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ۶



سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
QeshmAir
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝
դէպի Հայաստան եւ վերադարձ
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰





آژانس مسافرتی
هفت ستاره آسمان آفتابی
7 STARS
QeshmAir
IRAN AIRTOUR AIRLINES
VARESH AIRLINES
Armenia airways



خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی :
✦ Հայաստանում՝
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում
✦ Թուրի անմիջական գործադրողը՝
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում
مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان
09303810625 WhatsApp tel: 021-88796742-3
7setaretours





Արդեօք մինչ այժմ «Սիրոյ ծառ» ցանե՞լ էք
آیا تا به حال درخت عشق کاشته اید؟

Ձեր սիրոյ եւ գթութեան սերմերը ցանէք «Մահաք»-ում, որպէսզի դրանց մրգերը առողջութիւն հանդիսանան քաղցկեղով հիւանդ հազարաւոր մանուկների համար:

Ձեր տնկած ծառի հովանու ներքոյ՝ մանուկները կարող կը լինեն ապագային յոյսով նայել:

Ամսական կարգով վճարելով քաղցկեղով հիւանդ մէկ մանուկի դեղորայքի եւ բուժման ծախսը՝ միացէք «Մահաք»-ի մեծ ընտանիքին:

**Համագործակցութեան հեռախօսահամար՝ 021-23540**

از اینکه به پیام ما توجه کردید، سپاس گزاریم.
برای بازدید از بیمارستان محک که حاصل عشق شماست، با شماره ۰۲۱-۲۳۵۰۱۲۱۰ تماس بگیرید.

محک
موسسه خیریه حمایت از کودکان مبتلا به سرطان
mahak-charity.org


## Յարգելի նիւրապու

**Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նիւրապուութեան համար:**

**«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:**

**Այս դժւարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:**

*Շնորհակալ ենք, որ Դուք կաք:*

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

## Իրանի պատւիրակութիւնը լքել է COP28 համաժողովը՝ սիոնիստական ռեժիմի ներկայութեան պատճառով

*«ԱԼԻՔ» - Էներգետիկայի նախարար Ալի Աքբար Մեհրաբեանի գլխաւորած Իրանի պատուիրակութիւնը լքել է COP28 կլիմայի փոփոխութեան համաժողովը՝ ի նշան բողոքի միջազգային համաժողովում սիոնիստական ռեժիմի պաշտօնեաների ներկայութեան դէմ:*

*Ըստ նախարարի՝ Իրանը կարծում է, որ սիոնիստական ռեժիմի ոչ տեղին ներկայութիւնը միջոցառմանը, որն անցկացւում է համաշխարհային մակարդակով կլիմայի փոփոխութեան դէմ պայքարում միջազգային հանրութեան արդիւնաւէտութիւնն ու առաջընթացը գնահատելու նպատակով, հակասում է համաժողովի նպատակներին եւ առաջնորդող սկզբունքներին:*

## Նշւեց Հ. Մ. «Սարդարապատ» միութեան հիմնադրման 40-ամեակը

*«ԱԼԻՔ», Կ. Դ. - 2023 թւականը համընկնում է մեր մի շարք մարզա-մշակութային միութիւնների հիմնադրման ամեակներին: Յիշեալ միութիւններից է Թեհրանի Սարդարապատ քաղաքամասում, սրանից 40 տարիներ առաջ հիմնադրւած Հ. Մ. «Սարդարապատ» միութիւնը:*

*Թւականիս՝ նոյեմբերի 30-ին միութեան հիմնադրման 40-ամեակի առիթով միջոցառում էր կազմակերպւել նոյն քաղաքամասում գտնւող Սրբոց Վարդանանց եկեղեցու սրահում: Միջոցառումը զուգորդւած էր գեղարւեստական-բանախօսական յայտագրով, ուղերձների ընթերցմամբ միութեան գործունէութիւնը ներկայացնող տեսաֆիլմի ցուցադրութեամբ, եւ ընդունելութեամբ: Օրւայ բանախօս էր հրաւիրւել Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի ատենապետ Սուրիկ Աբնուսեանը:*

*Ծրագրի մանրամասները ներկայացւելու են օրաթերթիս առաջիկայ համարներից մէկում:*

## Հնարաւոր է ապամոնտաժւի Քեօլնում Հայոց Ցեղասպանութեան յուշարձանը



*Թուրքական մամուլում տարածւած լուրերի համաձայն՝ Քեօլնում թուրքական «Վաթան» կուսակցութեան մղած պայքարի հետեւանքով հնարաւոր է՝ ապամոնտաժւի տեղի Հայոց Ցեղասպանութեան յուշարձանը: Ըստ թուրքական լրատւամիջոցների՝ «Վաթան» կուսակցութեան՝ Գերմանիայի ներկայացուցիչ Դենիզ Երլդըրըմն իր ելոյթում թուրքերէն շնորհաւորել է Քեօլնի քաղաքապետարանի կայացրած որոշման կապակցութեամբ: Այդ մասին յայտնում է Akunq.net-ը:*

*Աղբիւրի համաձայն՝ մասնաւորապէս «Այդընլըք» պարբերականը գրում է, որ «Վաթան» կուսակցութեան ներկայացուցչութեան կոչը մեծ արձագանք է գտել տեղի թուրքական համայնքի կողմից, եւ Թուրքիայի Հանրապետութեան 100-րդ տարելիցի օրը՝ հոկտեմբերի 29-ին, Քեօլնում Հայոց Ցեղասպանութեան յուշարձանն ապամոնտաժելու ակցիա է իրականացւել, որն ապարդիւն չի անցել թուրքերի համար:*

*Քեօլնի քաղաքապետարանի կայացրած որոշմամբ՝ 2023 թ. դեկտեմբերի 7-ին նախատեսւող քաղաքապետարանի խորհրդի ժողովում յայտարարւելու է յուշարձանն ապամոնտաժելու անհրաժեշտութեան մասին: Մինչ օրս այդ հարցին հետամուտ են եղել Թուրքական միութիւնների նախաձեռնութեան հարթակը եւ «Վաթան» կուսակցութեան՝ Գերմանիայի ներկայացուցչութիւնը:*

*Դենիզ Երլդըրըմը նաեւ հանդէս է եկել Գերմանիայի թուրքական համայնքին ուղղւած կոչով՝ խնդրելով, որ 2023 թ. դեկտեմբերի 7-ին համայնքի ներկայացուցիչները հաւաքւեն Քեօլնի քաղաքապետարանի մօտ եւ իրենց աջակցութիւնը յայտնեն Հայոց Ցեղասպանութեան յուշարձանի ապամոնտաժման համար պայքարող թուրքական կազմակերպութիւններին, որպէսզի քաղաքապետարանի որոշումն անբեկանելի լինի: https://www.aydinlik.com.tr/haber/kolndeki-iftira-aniti-kaldiriliyor-437110*

**Թարգմանեց ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆԸ**

**Akunq.net**


# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Իրանի համալսարաններում դասաւանդող յարգարժան դասախօսներ,
Այսու յայտնում ենք, որ Թեհրանի հայոց թեմի ազգային
առաջնորդարանը, բարձր հովանաւորութեամբ
Թեհրանի հայոց թեմի առաջնորդ
**ԳԵՐՇ. Տ. ՍԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ**
**մտադիր է տպագրել մի գիրք՝**
**Իրանի համալսարաններում հայ դասախօսների վերաբերեալ:**
Ուստի, այս ուղղութեամբ ձեր փաստաթղթերը
ներկայացնելու համար խնդրում ենք զանգահարել
**Թ. Հ. Թ. ազգ. առաջնորդարանի հեռախօսահամարներով՝ 88901634 - 6**

**ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**



Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
**ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ**
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «نارِبه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am


Տիգրան Աբրահամեան.

## «44-օրեայ պատերազմից ի վեր, Բաքւի բանտերում, տարբեր հաշւարկներով 80-90 հայ կայ»

*44-օրեայ պատերազմից ի վեր, Բաքւի բանտերում, տարբեր հաշւարկներով 8-9 տասնեակ գերեվարւած հայեր կան: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է ՀՀ ԱԺ «Պատիւ ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Տիգրան Աբրահամեանը:*

*«Չնայած այն հանգամանքին, որ տարբեր տեսանիւթերով մեծ թւով գերեվարւածների՝ Ադրբեջանում գտնւելու վերաբերեալ փաստական տւեալներ կան, Ադրբեջանը մինչեւ հիմա նրանց շատերի գերեվարման փաստը չի հաստատում:*

*Հայաստանեան գործող իշխանութիւնը, եթէ մի փուլում խիստ ակտիւ... ու տարատեսակ քարոզարշաւի էր վերածում ադրբեջանական բանտերում գտնւող գերիների հայրենադարձման հարցը, ներկայումս այդ թեմայով ո՛չ խօսում է, ո՛չ էլ առանձնապէս աշխատանք տանում:*



*Չարիքի այս իշխանութիւնը թքած ունի մարդկային ճակատագրերի նկատմամբ, որի արտացոլումն այս 5 տարիների ընթացքում փաշինեանական իշխանութեան ձեռագիրն է դարձել»,- նշել է նա:*

Աւետիք Չալաբեան.

## «ՔՊ-ն բացայայտ ցանկանում է ձախողել «Հայաքւէ»-ի ներկայացրած օրէնքի նախագծի ընդունումը»

««Հայաքւէ» օրէնսդրական նախաձեռնութիւնը հասել է կարեւոր հանգրւանի»,- յայտարարեց «Հայաքւէ» նախաձեռնութեան համակարգող Աւետիք Չալաբեանը:

Նա տեղեկացրեց, որ դեկտեմբերի 4-ին ժամը 10:00-ին իրենց օրէնքի նախագիծը պաշտօնապէս քննարկւելու է Ազգային ժողովում:

«Ազգային ժողովում ներկայումս «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան ներկայացուցիչները մեծամասնութիւն են կազմում, նրանք բացայայտ ցանկանում են ձախողել մեր օրէնքի նախագծի ընդունումը. ձախողել, որպէսզի կարողանան մէկընդմիշտ փակել Արցախի հարցը եւ արդէն թղթով այն յանձնել թշնամուն, որպէսզի կարողանան հրաժարւել Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումից եւ Հայաստանը վերածել թուրքական խաչմերուկի»,- յայտարարեց Աւետիք Չալաբեանը:

Նա կոչ արեց «Հայաքւէ»-ի բոլոր աջակիցներին երկուշաբթի, ժամը 10:00-ին հաւաքւել Ազգային ժողովի մուտքի մօտ:



«Կարեւոր է կրկին միասնականութիւն եւ վճռականութիւն ցուցաբերել եւ մեր հաւաքական կամքն արտայայտենք այս ապազգային իշխանութեանը»,- ասաց նա:

Յիշեցնենք, որ «Հայաքւէ» նախաձեռնութիւնը առաջարկել է Հայաստանի ՔՕ օրէնսգրքում լրացումների նախագիծ, ըստ որի քրէօրէն պատժելի արարքներ են որակւում Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումից հրաժարւելը կամ դրա վտանգաւորութիւնը նսեմացնելը ու ՀՀ անունից Արցախն այլ պետութեան կազմում ճանաչելը:

**News.am**


SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت



املاک هنرمندان
بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی



**ՔԱՐԻՄԻ**
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09121193212



**«Արարատ»**
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی، رادیوگرام مبله، صفحه گرام، لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388



ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է՝ www.alikonline.ir


**«Իրանը....**

(Շար. 1-ին էջից)

*որպէսզի ապրանքների տարանցում իրականանայ յատկապէս, որ Հնդկաստանից դէպի Չաբահար եւ այնտեղից դէպի Եւրասիա հարաւ-հիւսիս միջանցք գոյութիւն ունի»: Ասուլիսի ընթացքում պատգամաւորը ասել է. «Մեզ համար կարեւոր են բեռների եւ ուղեւորների նաւահանգիստները, եւ երկաթուղային ու ճանապարհային տրանսպորտով բեռների եւ ուղեւորների փոխադրումը»: Նա կարեւորելով կենսոլորտի պահպանման անհրաժեշտութեանը ասել է. «Ծովի եւ դրա եզերքը կարեւոր հանգամանքներից են՝ շրջակայ միջավայրի հարցով, եթէ մենք ցանկանում ենք բիզնես սկսել, ապա ջրածինների, ծովային ռեսուրսների եւ աղտոտւածութեան մասին քննարկումը շատ կարեւոր է, եւ մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք դրան ծովային տնտեսութեան հետ մէկտեղ»: Նա նաեւ կարեւորել է այս ոլորտում զբօսաշրջութեան զարգացման հարցը: Պատգամաւորի հաւաստմամբ. «Մեր երկիրը լաւ դիրք ունի տարածաշրջանում եւ ուղղակի կապ ունի Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի հետ, ուստի Իրանը ռազմավարական եւ յատուկ նշանակութեամբ դիրք ունի տարածաշրջանում, ու թէեւ բոլորն ասում են, որ Հարթլանդը կամ կենտրոնը՝ Կենտրոնական Ասիայում եւ Կովկասում է, սակայն ես համոզւած եմ, որ կենտրոնը Իրանն է: Որովհետեւ այն գտնւում է շատ լաւ դիրքում, եւ մենք պէտք է օգտագործենք մեր երկրի աշխարհագրական դիրքը տարբեր ոլորտներում, քանի որ մենք կարող ենք լինել հանգոյց միջանցք, հետեւաբար մեզ պէտք է ծովային տնտեսութիւն»:*